09.04.2021
347-36

ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Փաշինյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել քաղաքացի Հարություն Ծատրյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: Քաղաքացին 2021 թվականի մարտի 20-ին տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել ՀՀ վարչապետի աշխատակազմ, որը վերահասցեագրվել է Քաղաքացիական ավիացիայի կոմիտե(***հարցման պատճենը՝ երկրորդ էջում***):

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրմադրել հետևյալ տեղեկությունները.

1. Տնօրինո՞ւմ է արդյոք ՀՀ վարչապետի աշխատակազմը վերոնշյալ հարցմամբ պահանջվող տեղեկությունները կամ դրանց մի մասը:
2. Եթե ոչ, խնդրում ենք նշել, թե որ պետական մարմինն է տնօրինում վերոնշյալ հարցմամբ պահանջվող տեղեկությունները:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.123167
20-03-2021թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *ՀՀ վարչապետի աշխատակազմ*

Դիմող՝ *ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՏՐՅԱՆ*
ՀՀ քաղաքացի
Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, 0062, ՆՈՐ ՆՈՐՔ, ՄՈԼԴՈՎԱԿԱՆ Փ., 24/1, 6,*
htsatryan@hotmail.com : +37493934748

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Ս.թ. փետրվարի 3-ին Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ «երբ Ռուսաստանի հետ չվերթները բացվեց, առաջին օրը ավելի շատ մարդ եկել է, քան գնացել» (աղբյուրը՝ https://armenpress.am/arm/news/1042273.html):
- ինչպիսի՞ դինամիկա է գրանցվել Ռուսաստանի հետ չվերթները բացվելուց շուրջ 50 օր անց՝ մարտի 20-ը ներառյալ:
- քանի՞ ՀՀ քաղաքացի է Հայաստանից մեկնել Ռուսաստան 2021թ. փետրվարի 1-ից հետո:
- քանի՞ ՀՀ քաղաքացի է Ռուսաստանից Հայաստան եկել 2021թ. փետրվարի 1-ից հետո:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՏՐՅԱՆ